ՄԱԶՄԱՆՅԱՆ Ռ., Հայ երաժշտական կյանքի տարեգրություն. 1901-1910, Երևան, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի հրատ., 2006, 207 էջ:

Հայ երաժշտական հանրության շարքերից հեռացավ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագի-տության թեկնածու Ռուզաննա Մազմանյանը՝ առանց իր հեղինակած նոր՝ «Հայ երաժշտական կյանքի տարեգրություն. 1901-1910» գրքի լույսընծայման ականատեսը դառնալու: Այն հրապարակ եկավ Ռ. Մազմանյանի մահից հետո, Արվեստի ինստիտուտի նախաձեռնությամբ և նվիրված է հայ երաժշտության երախտավորներից մեկի՝ կոմպոզիտոր, խմբավար, մանկավարժ, հայ երաժշտության մեջ օրատորիա-կանտատի («Պատարագ») ժանրի հիմնադիր Մակար Եկմալյանի (1856-1905) ծննդյան հիշարժան հոբելյանին՝ 150-ամյակին:

Ռ. Մազմանյանը գնահատելի ավանդ է ներդրել հայ երաժշտագիտության մեջ: Նրա գրչին են պատկանում արժեքավոր գրքեր ու գիտական հոդվածներ, այդ թվում՝ հայ կոմպոզիտորական դպրոցի հիմնադիրներից մեկին՝ Նիկողայոս Տիգրանյանին նվիրված մենագրությունը (1978), «Սովետահայ գրականությունը 1966-1973 թվականների երաժշտության մասին» գիրքը (1974): Նա կազմել ու ծանոթագրել է Ն. Տիգրանյանի «Հոդվածների, հուշերի ու նամակների» ժողովածուն (1981) և, ի վերջո, ստանձնել հայ երաժշտական կյանքի տարեգրությունը ստեղծելու պատվավոր գործը:

Ընթերցողի ուշադրությանը ներկայացված հայ երաժշտական կյանքի տարեգրության երրորդ գիրքը ժամանակագրական առումով նախորդում է տարիներ առաջ Ռ. Մազմանյանի հրատարակած երկու հատորներին և էապես համալրում մեր պատկերացումները XX դ. երաժշտական մշակույթում տեղի ունեցող ստեղծագործական խմորումների ու երաժշտահասարակական կյանքի զարկերակի մասին: Հատորում ընդգրկված հարուստ նյութը թույլ է տալիս մտովի վերստեղծել 1901-1910 թթ. հայ երաժշտական կյանքի իրական պատկերը: Ռ. Մազմանյանը մանրակրկիտ ուսումնասիրել է ժամանակի պարբերական մամուլը, ի շարս որի՝ «Բազմավեպ», «Գեղունի» (Վենետիկ), «Անահիտ», «Բանասեր» (Փարիզ), «Գեղարվեստ», «Մշակ», «Տարազ» (Թիֆլիս), «Մասիս», «Սուրհանդակ», «Բյուզանդիոն», «Տաճար» (Կ. Պոլիս), «Թատրոն և երաժշտություն» (Բաքու), ինչպես նաև “Восточное обозрение”, “Новое обозрение”, “Кавказ”, “Кавказский вестник” և այլք: Հեղինակը գիտական շրջանառության մեջ է դրել նորահայտ փաստեր, արխիվային փաստաթղթեր ու վավերագրեր, ուսումնասիրել Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում պահպանվող՝ Կոմիտասի, Ալեքսանդր Սպենդիարյանի, Արմեն Տիգրանյանի, Անտոն Մայիլյանի, Դանիել Ղազարյանի, Ստեփան Դեմուրյանի, Եղիշե Բաղդասարյանի, Հովհաննես Նալբանդյանի, Դավիթ Դավթյանի, Ալեքսանդր Կարատովի (Կարապետյան), Բեգլար Ամիրջանյանի (Ամիրջան), Նադեժդա Պապայանի, Մարգարիտ Բաբայանի, Արշակ Կոստանյանի, Սարգիս Մուրադյանի, Կոնստանտին Սարաջյանի, Օվսաննա Տեր-Գրիգորյանի, Մուշեղ Աղայանի դիվանները:

Արժանին հատուցելով Ռ. Մազմանյանի գիտական գործունեությանը, մասնավորապես, Արևելքի երաժշտության խոշոր գիտակ Նիկողայոս Տիգրանյանի կյանքին ու գործին նվիրված նրա ուսումնասիրություններին՝ ուզում ենք հատկապես կարևորել երաժշտագետի կյանքի վերջին շրջանի մասնագիտական հետաքրքրությունները, որոնք բևեռված էին գիտական մտքի զարգացման աներկբա նախապայման հանդիսացող տարեգրության վրա:

Ինչպես և հեղինակի նախորդ երկու գրքերը՝ «Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1920-1945)» և «Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960)», ներկա տարեգրությունը ևս մի կարևոր սկզբնաղբյուր է XX դարի առաջին հախուռն տասնամյակի հասարակական-մշակութային համայնապատկերի ընկալման և գնահատման դիտակետից: Այս տարիներին են ամրապնդվել ազգային երաժշտության հիմքերը, ասպարեզ եկել տաղանդաշատ երաժիշտների ու հասարակական-մշակութային գործիչների մի ամբողջ համաստեղություն՝ խթանելով կատարողական արվեստն ու հայ երաժշտագիտական մտքի զարգացման աննախադեպ վերելքը: Ինչպես երևում է «Տարեգրության» էջերից, զգալի տեղաշարժեր են կատարվել երաժշտաքննադատական մտքի ասպարեզում. հիշենք Քր. Կարա-Մուրզայի՝ «Մշակում» տպագրված հոդվածներն օպերային ներկայացումների, սիմֆոնիկ երաժշտության համերգների մասին, Ա. Մայիլյանի հոդվածները Տ. Չուխաճյանի, Ալ. Սպենդիարյանի, Մ. Եկմալյանի, Քր. Կարա-Մուրզայի, խմբերգային արվեստի և երաժշտության այլևայլ խնդիրների վերաբերյալ, երաժշտագետ, կոմպոզիտոր և խմբավար Սպ. Մելիքյանի ուսումնասիրությունները, այդ թվում՝ «Երաժշտության զարգացման խնդիրները մեզանում» գիրքը (Թիֆլիս, 1906 թ.), 1910 թ. Բաքվում Ա. Մայիլյանի հիմնած «Թատրոն և երաժշտություն» ամսագիրը, որ լուսաբանում էր Բաքվի երաժշտական կյանքի կարևոր իրադարձությունները: Ռ. Մազմանյանի «Հայ երաժշտական կյանքի տարեգրությունը» փաստացի ապացույցն է նաև հայոց կյանքում հսկայական դեր խաղացած երաժշտական հրապարակախոսության ու մամուլի, որոնց դերն առ այսօր լիարժեք չի կարևորվել:

Դրվատանքի է արժանի «Տարեգրության» խմբագիր և ծավալուն առաջաբանի հեղինակ, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի փոխտնօրեն, արվեստագիտության թեկնածու Աննա Ասատրյանի կատարած աշխատանքը: Եթե տարեգրության ժանրը ենթադրում է երաժշտամշակութային կյանքում արձանագրված բազմաթիվ իրադարձությունների, նշանակալից հոբելյանների, համերգների ու զանազան փաստերի շարադրումը ժամանակագրական կարգով և չի հետապընդում դրանք ամբողջականացնելու, մեկնաբանելու, փոխադարձ կապի և քննության դիտակետից մեկտեղելու խնդիրները, ապա, շնորհիվ Ա. Ասատրյանի առաջաբան-հոդվածի, մեր առջև հառնում է տարեգրությունն ընդգրկող ժամանակահատվածի տեսանելի և դինամիկ պատկերը: Խմբագիրը գիտական բարեխղճությամբ անդրադառնում է խնդրո առարկա ժամանակահատվածի հայոց երաժշտական կյանքի ամենացայտուն դեմքերին ու փաստերին, յուրովի ուրվագծում է Ռ. Մազմանյանի «Տարեգրության» մեջ ընդգրկված փաստացի նյութի հետնախորքը՝ հասարակական, քաղաքական ու մշակութային իրադարձություններով լեցուն այդ բուռն տասնամյակը, որ նշանավորվեց հայ դասական երաժշտության հիմնադիր Կոմիտասի բազմակողմանի ու արգասավոր գործունեությամբ: Դասականների կողքին (Կոմիտաս, Ալ. Սպենդիարյան) իրենց ստեղծագործական ու կատարողական գործունեությունն են ծավալել կոմպոզիտորներ Ա. Տիգրանյանը, Ռ. Մելիքյանը, Ե. Բաղդասարյանը, Գ. Սյունին, Ա. Մայիլյանը, Դ. Ղազարյանը, Կարա-Մուրզայի աշակերտ Ա. Մանուկյանը: XX դ. առաջին տասնամյակում հայ երաժշտական մշակույթի հիշյալ և բազում այլ երախտավորների ջանքերով ստեղծվեցին այն լուրջ նախադրյալները, որոնք ուղենիշ դարձան հայ պրոֆեսիոնալ երաժշտության հետագա զարգացման համար: Այս առումով Ա. Ասատրյանը, խախտելով սխեմատիկ առաջաբանի սահմանները, ստեղծել է մի ուշագրավ ժամանակագրական ակնարկ՝ միտված տարեգրությանը:

Ներկա, ինչպես և մի շարք այլ հեղինակների գրքերի հրատարակումը հնարավոր դարձավ Հայ-ամերիկյան ընկերակցության կենտրոնի նախագահ, բարե-

բար Օննիկ Մեհրաբյանի և ընկերակցության մշակութային կենտրոնի գործադիր տնօրեն Արսեն արք. Բերբերյանի հովանավորության շնորհիվ: Ուզում ենք հուսալ, որ մեծահարգ բարերարները նույն բարյացակամությամբ կհովանավորեն Ռ. Մազմանյանի XX դարի երկրորդ տասնամյակի նյութն ընդգրկող «Հայ երաժշտական կյանքի տարեգրության» հրատարակումը, ինչը լիովին կամբողջացնի տվյալ ժամանակափուլի փաստական կառույցը:

ԵՐՆԶԱԿՅԱՆ Լ. Վ.
Արվեստագիտության դոկտոր